

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2009թ. ապրիլի 2-ի №14  
արձանագրային որոշման

**Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ**  
**ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության իրականացման սույն հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ) ներկայացնում է մտավոր սեփականության պահպանության համակարգի ներկայիս առանձնահատկությունները, վերլուծության միջոցով բնութագրում է տնտեսության մեջ մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման ներկա վիճակը, բացահայտում է առկա խնդիրները և առաջարկում է դրանց լուծման արդյունավետ ուղիներ:

Վերլուծությունները հիմնված են միջազգային առաջավոր փորձի վրա՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ներկայիս միտումները և գիտելիքի վրա հիմնված գլոբալ տնտեսությունում մրցունակության ապահովման անհրաժեշտությունը:

Մասնավորապես հաշվի է առնվել այս բնագավառում զարգացած երկրների փորձը, որոնց համակարգերը առավելագույնս հստակ են արտացոլում ազատական շուկայական տնտեսության պահանջները:

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ խորհրդատվություններն իրականացվել են Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության և Եվրոպական արտոնագրային կազմակերպության աջակցությամբ:

Մտավոր սեփականությունը ներառում է իրավունքի երկու հիմնական ոլորտներ՝ արդյունաբերական սեփականություն և հեղինակային իրավունք:

Արդյունաբերական սեփականության իրավունքները բազմազան են: Դրանցից ամենահայտնիները գյուտերի և ապրանքային նշանների նկատմամբ իրավունքներն են: Գյուտի արտոնագիրը սահմանափակ ժամանակահատվածով բացառիկ իրավունք է տալիս գյուտարարին՝ գյուտի տեխնիկական էության բացահայտման պայմանով:

Ապրանքային նշաններին, որպես որոշակի սուբյեկտների կողմից առաջարկվող ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների, իրավական պահպանություն տրամադրվում է չսահմանափակված ժամկետով, պայմանով, որ կշարունակվի դրանց օգտագործումը առևտրային նպատակներով:

Արդյունաբերական սեփականության իրավունքները ներառում են նաև համեմատաբար քիչ հայտնի իրավունքներ, ինչպիսիք են՝ արդյունաբերական նմուշների, աշխարհագրական նշումների, ֆիրմային անվանումների և սելեկցիոն նվաճումների նկատմամբ իրավունքները:

Մտավոր սեփականության բնագավառի մյուս հիմնական ոլորտը հեղինակային իրավունքի ոլորտն է, որը ներառում է գրականության, գիտության, արվեստի բնագավառների ստեղծագործությունների նկատմամբ իրավունքները, ինչպես նաև կատարողների, հնչյունագրեր արտադրողների, ֆիլմ արտադրողների, հեռարձակող կազմակերպությունների, հրատարակիչների, տվյալների բազաներ պատրաստողների իրավունքները, որոնք հայտնի են որպես հարակից իրավունքներ:

Մտավոր սեփականության իրավունքների համար ընդհանուրն այն է, որ դրանց տիրապետողն իրավունք ունի արգելելու պոտենցիալ առևտրային արժեք ներկայացնող իրավունքի ոչ նյութական օբյեկտի ապօրինի օգտագործումը՝ անկախ նրանից, թե այն նորարարական արտադրանքի կամ գործընթացի հիմքում ընկած լուծում է, ապրանքի ծագման նշում, առևտրային կազմակերպության անվանում, երաժշտություն, համակարգչային ծրագիր, թե տեսալսողական ստեղծագործություն:

## **1. Մարտահրավերներ**

Մտավոր սեփականության պահպանությունը կարևորագույն պայման է նորարարության համար, իսթանում է հետազոտությունների և զարգացումների ինստիտուտի ներդրումը և գիտելիքի տեղափոխումը լաբորատորիայից արտադրություն, արտադրությունից՝ շուկա:

Բացի դրանից, մտավոր սեփականության պահպանությունը կարևոր պայման է նաև արվեստի և մշակույթի զարգացման համար:

Մտավոր սեփականության իրավունքների պահպանության հստակ և արդյունավետ ռեժիմը գլոբալ շուկայում գիտելիքների և ստեղծագործությունների ազատ շարժի գլխավոր պայմանն է: Ընդ որում, սա նաև կարող է ավելի լայն քաղաքականության մի մասը կազմել և էական նշանակություն ունենալ գլոբալ հարցերի ու հիմնախնդիրների լուծման համար:

## **2. Արդյունաբերական սեփականության իրավունքների պահպանության տնտեսական օգուտները**

Սեփականությունը, լինի նյութական թե ոչ նյութական, որոշիչ դեր ունի շուկայական տնտեսության զարգացման համար: Արդյունաբերական սեփականության իրավունքները, մասնավորապես՝ գյուտերի, արդյունաբերական նմուշների և սելեկցիոն նվաճումների նկատմամբ իրավունքները, խթան են հանդիսանում նոր գյուտերի և այլ նորարարությունների ստեղծման համար՝ դրանց նկատմամբ սահմանափակ ժամանակահատվածով բացառիկ իրավունքներ տրամադրելով: Այս իրավունքների տրամադրումն ու պահպանությունը նպաստում է նորեկների հեշտությամբ շուկա մուտք գործելուն՝ ներգրավելով ռիսկային կապիտալի ներդրումներ, դրանով իսկ ապահովելով իրենց կողմից լիցենզավորված արտադրանքի թողարկումը կարողունակ ընկերությունների կողմից:

Գիտելիքի վրա հիմնված գլոբալ տնտեսության մեջ գյուտարարության և նորարարության կարևորությունը որպես մրցակցության խթան աճում է: Այս միջավայրում տնտեսավարող սուբյեկտների, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկատիրական (ՓՄՁ) և հետազոտական կազմակերպությունների, ներառյալ համալսարանների անընդհատ աճող դերը՝ նրանց լիցենզիաների հիման վրա ապրանքի արտադրության հարցում դառնում է ավելի կարևոր: Մասնավոր հատվածի և հետազոտական կազմակերպությունների միջև գիտելիքների փոխանակումն ուժեղացնում է մրցակցությունը: Այս մոտեցումը նպաստավոր պայմաններ է ստեղծում ավելի բարձր մակարդակի գործունեության դաշտի ձևավորման համար և հեշտացնում է գիտելիքների միջազգային փոխանակումը:

Որքան ակտիվությամբ են հետազոտական կազմակերպություններն իրականացնում արտադրանքի լիցենզավորման հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն, այնքան շատ են դրանց կարիքներն ու խնդիրները մոտենում ՓՄՁ-ների կարիքներին ու խնդիրներին: Այդ իսկ պատճառով ՓՄՁ-ների համար ձեռնարկվող միջոցառումները որոշակի առումով կարող են նաև շահավետ լինել հետազոտական կազմակերպությունների համար:

Պետք է նկատի ունենալ, որ արդյունաբերական սեփականության իրավունքների տրամադրումը, որպես մտավոր սեփականության օբյեկտների կառավարման կարևոր բաղկացուցիչ, մեծ դերակատարում ունի ընկերությունների համընդհանուր բիզնես ռազմավարության մեջ: Դա պայմանավորված է նրանով, որ բիզնես ռազմավարությունը բացի նոր լուծումների, նորարարությունների նկատմամբ իրավունքների ամրագրումից և

դրանց հիման վրա արտադրանքի թողարկումից, ենթադրում է նաև դրանց միջոցով և դրանց կիրառմամբ նոր այլ լուծումների ստեղծում: Վերջիններիս նկատմամբ իրավունքների ամրագրումը հնարավորություն է տալիս դրանց իրավատերերին ստիպելու պոտենցիալ մրցակիցներին՝ նոր հետազոտությունների եւ մշակումների միջոցով շրջանցել արտոնագրված տեխնոլոգիաները, դրանով իսկ զսպելով մրցակիցների գործունեությունը շուկայում:

### **3. Մտավոր սեփականության պահպանության համակարգի ներկայիս վիճակը**

#### **3.1. Գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ**

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների իրավական պահպանության ներկա փուլը Հայաստանի Հանրապետությունում բնութագրվում է օրենսդրության առանձնահատկություններով և դրա կիրարկման պրակտիկայով: Սկսած 1993 թվականից օրենսդրությունը ենթարկվել է մի շարք փոփոխությունների, որոնք կատարվել են՝ հաշվի առնելով տնտեսության զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքները, որ նշված օբյեկտների նկատմամբ իրավունքների տրամադրման ժամկետներն առավելագույնս պետք է կրճատվեն, դրանց հետ կապված ծախսերը պետք է հասցվեն նվազագույնի և այդ իրավունքների պահպանությունը պետք է լինի հուսալի և արդյունավետ: Այս խնդիրները որոշակի առումով լուծված են 2008 թվականին ընդունված «Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որը համապատասխանում է միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերին և Եվրամիության համապատասխան դիրեկտիվներին:

Օրենքի հիմնական առանձնահատկությունն այն է, որ գյուտի արտոնագիրը տրվում է առանց ըստ էության փորձաքննության անցկացման (այսինքն՝ փորձաքննության ընթացքում չեն ստուգվում գյուտի արտոնագրաունակության պայմանները), որը կարող է գործել 10 տարի: Արտոնագիրը կարող է գործել նաև 20 տարի, եթե մինչև գործողության 9-րդ տարվա ավարտը արտոնագրատիրոջ կողմից ապացույցներ են ներկայացվում տվյալ գյուտի արտոնագրաունակության մասին: Ապացույցները պետք է տրված լինեն միայն տվյալ հարցում մասնագիտացված, միջազգայնորեն ճանաչված որևէ որոնման կենտրոնի կողմից: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս խուսափել մեծաքանակ

փորձագետներ ունենալու անհրաժեշտությունից՝ միաժամանակ ապահովելով բարձր որակ:

Օրենքի մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ հստակ սահմանում է արտոնագրային իրավունքների իրականացման մեխանիզմը, երբ հարց է առաջանում արգելելու երրորդ անձանց՝ տվյալ գյուտի օգտագործումը: Այսպիսի դեպքում Օրենքը նախատեսում է արտոնագրից բխող բացառիկ իրավունքն իրականացնել միայն այն ժամանակ, երբ առկա են տվյալ գյուտի արտոնագրաունակությունը հաստատող ապացույցներ: Այսպիսի մոտեցումը որոշակի առումով կնվազեցնի համապատասխան որակ չունեցող գյուտերին արտոնագիր տալու դեպքերը, նմանօրինակ հայտերի ստացումը և կբացառի չհիմնավորված խոչընդոտների առաջացման հնարավորությունը բիզնեսում:

### **3.2. Ապրանքային նշաններ, ապրանքների ծագման տեղանուններ և աշխարհագրական նշումներ**

Ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների և աշխարհագրական նշումների իրավական պահպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունն սկսել է ձևավորվել 1995 թվականից, որի հետագա փոփոխությունները նպատակաուղղվել են օրենսդրության կատարելագործմանը, հաշվի առնելով ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջները, միջազգային առաջավոր փորձը և օրենքի կիրարկման պրակտիկայում առաջացած խնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Մինևույն ժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները կարևոր դեր են խաղում բարեխիղճ մրցակցության համակարգի ձևավորման համար, քանի որ հենց այդ նշաններն են, որ թույլ են տալիս սպառողին տարբերել մի կազմակերպության ապրանքներն ու ծառայությունները մեկ այլ կազմակերպության ապրանքներից ու ծառայություններից: Բացի դրանից, ապրանքային նշանների դերը կարևորվում է նաև նրանով, որ մի կողմից դրանք ծառայում են որպես տեղեկատվության և գովազդի միջոց, մյուս կողմից հանդիսանում են կազմակերպության ունակությունների և համբավի խորհրդանիշը:

Այս կապակցությամբ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է ապրանքային նշաններին իրավական պահպանություն տրամադրելու նպատակով յուրաքանչյուր դեպքում պարտադիր հաշվի առնել ավելի վաղ գործող իրավունքները,

որոնք ձեռք են բերվել ոչ միայն ապրանքային նշանների, այլ նաև ֆիրմային անվանումների նկատմամբ:

Ապրանքային նշանների իրավական պահպանության մասին օրենսդրությունն այսօր ընդհանուր առմամբ համապատասխանում է այն նորմերին, որոնք սահմանված են բնագավառի մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ ԱՀԿ Մտավոր սեփականության առևտրին առնչվող հայեցակետերի մասին պայմանագրով:

Չնայած դրան, անհրաժեշտություն կա օրենսդրությունը համապատասխանեցնել նաև նոր միջազգային պայմանագրերով սահմանված պահանջներին և Եվրամիության դիրեկտիվներին: Բացի դրանից, օրենքի կիրարկման պրակտիկան ցույց է տալիս, որ փորձաքննության անցկացման որոշ դրույթներ հստակեցման կարիք ունեն և պետք է համապատասխանեցվեն միջազգային ամենախիստ չափանիշներին:

Մի փոքր այլ է պատկերը ապրանքների ծագման տեղանունների և աշխարհագրական նշումների իրավական պահպանության հարցերում: Չնայած ապրանքների ծագման տեղանունների մասին փաստացի գործող օրենքի առկայությանը, դրա կիրարկման հետ կապված դեռևս կան որոշակի խնդիրներ: Մասնավորապես այն հանգամանքը, որ առայժմ օրենքը գործում է հանքային ջրերի անվանումների համար, արդեն լուրջ քննարկումների և նոր մոտեցումների ամրագրման անհրաժեշտություն է առաջացրել:

Աշխարհագրական նշումների իրավական պահպանությունը կարգավորող որոշ դրույթներ տեղ են գտել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքում: Աշխարհագրական նշումների սահմանումն ու պահպանության հիմնական դրույթները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Հետևապես այն հանգամանքը, որ առանձին օրենսդրական ակտով հստակ կարգավորված չեն աշխարհագրական նշումների իրավական պահպանության տրամադրման և դադարման, ինչպես նաև դրանց օգտագործման կարգն ու պայմանները, կարող է որոշակի խնդիրների առաջացման պատճառ դառնալ, մասնավորապես դրանց ապօրինի օգտագործումը անխուսափելիորեն կհանգեցնի անբարեխիղճ մրցակցության ծավալման:

Նշված խնդիրների լուծումը անհրաժեշտ է իրականացնել «Ապրանքային նշանների մասին» և «Աշխարհագրական նշումների մասին» նոր օրենքների ընդունմամբ:

### **3.3. Հեղինակային իրավունք**

Մտավոր սեփականության մյուս՝ հեղինակային իրավունքի ոլորտում իրավիճակն էապես այլ է: Հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները կարգավորվում են 2006

թվականին ընդունված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքով: Օրենքն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին և Եվրամիության դիրեկտիվների պահանջներին:

Օրենքին համապատասխան, հեղինակների ընդհանուր շահերը պաշտպանելու և գույքային իրավունքները կառավարելու նպատակով ստեղծվել և գործում է իրավատերերի գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման արդեն լիովին կայացած կազմակերպություն, որն ինտեգրված է միջազգային համապատասխան ցանցի մեջ և համագործակցում է պետական, հասարակական և մասնավոր կառույցների հետ:

Օրենքի համաձայն, հեղինակային իրավունքի ծագման համար որևէ գրանցում չի պահանջվում, իրավունքը ծագում է համապատասխան ստեղծագործության ստեղծման կամ հարակից իրավունքի օբյեկտի պատրաստման փաստի ուժով:

#### **4. Արդյունաբերական սեփականության իրավունքների ռազմավարությունը**

Արդյունաբերական սեփականության իրավունքների պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության ռազմավարությունը պետք է նպատակաուղղված լինի արձագանքելու քսանմեկերորդ դարում գիտելիքի վրա հիմնված գլոբալ տնտեսության մարտահրավերներին:

Արդյունաբերական սեփականության պահպանության համակարգը պետք է շարունակի ծառայել որպես գյուտարարության և ինովացիոն գործունեության ակտիվացման խթան: Դրան հասնելու համար արդեն իսկ միջազգայնորեն ընդունված են որոշակի չափանիշներ, մասնավորապես՝

- ժամանակակից տեխնոլոգիաներով արդյունաբերական սեփականության օբյեկտների հայտերի ընդունման մեխանիզմ.
- միջազգային ստանդարտներին խիստ համապատասխանող և պրակտիկայում ընդունված փորձաքննության բարձրորակ համակարգ.
- տրամադրվող իրավունքների որակ, հստակ օրենսդրություն և մատչելի գներ, օրենքների մեկնաբանության և դատավարական միասնական ընթացակարգեր.
- իրավական պահպանություն ստացած օբյեկտների մասին տվյալների բազաների ձևավորում, դրանց փոխանակում օտարերկրյա համապատասխան գերատեսչությունների բազաների հետ, հանրության համար դրանց մատչելիության ապահովում.

- մտավոր գործունեության արդյունքների արժևորում և գյուտերի ու նորարարությունների դյուրին շրջանառության երաշխավորում:

Այս կապակցությամբ տրամադրված իրավունքների հիմնավորվածությունը շատ կարևոր է ամբողջ համակարգի բոլոր ասպեկտների համար, որոնք խթանում են բիզնեսը, ներառյալ ՓՄՁ-ների գործունեությունը, նպաստում են գիտելիքի փոխանցմանը և հզոր ու արդյունավետ միջոց են հանդիսանում կեղծ ու նմանակված ապրանքների շրջանառության, ինչպես նաև հեղուկության դեմ պայքարում:

Բացի դրանից, որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, մտավոր սեփականության լիարժեք շրջանառության ապահովումը կարող է իրականացվել միայն մտավոր սեփականության գնահատման հիման վրա, ինչը օրենսդրորեն կարգավորված չէ: Ընդ որում համապատասխան օրենսդրական դաշտը կարող է ունենալ կիրարկման բարձր արդյունավետություն, եթե գնահատողների պատրաստման աշխատանքներին ներգրավվեն համալսարանները:

#### ***Անհրաժեշտ է՝***

- *ներդնել արդյունաբերական սեփականության օբյեկտների հայտերն էլեկտրոնային եղանակով ընդունման, քննարկման եւ հրապարակման համակարգեր.*
- *առավելագույնս կիրառել գյուտերի փորձաքննության անցկացման աշխատանքների պատվիրումը (outsourcing) Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից հավաստարմագրված միջազգային եւ օտարերկրյա որոնման կենտրոններին.*
- *ընդլայնել արդյունաբերական սեփականության տեղեկատվական բազաների փոխանակման շրջանակները եւ ինտերնետային ցանցի միջոցով ապահովել դրանց մատչելիությունը հանրության համար.*
- *ներդնել մտավոր սեփականության հարցերով իրականացվող ծառայությունների նկարագրությունների կազմման եւ կատարողականների գնահատման համակարգ.*
- *աջակցել օտարերկրյա պետություններում մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների ամրագրմանը.*
- *ներդնել մտավոր սեփականության գնահատման համակարգ, որը ենթադրում է համապատասխան օրենսդրական դաշտի ապահովում եւ գնահատողների ինստիտուտի ձևավորում:*



## 5. Արդյունաբերական սեփականության իրավունքների որակը

### 5.1. Գյուտեր

Որակի ապահովման առումով կարևորն այն է, թե ինչպիսի գյուտերին և նորարարություններին է տրվում արտոնագրային պահպանություն: Այս առումով անհրաժեշտ է հայտատուներին մատուցվող խորհրդատվության միջոցով կանխել կամ առավելագույնս կրճատել ոչ արտոնագրաունակ գյուտերի հայտերի մուտքը, որոնք բացասական ազդեցություն ունեն այն առումով, որ դրանց պատճառով ավելի կարևոր նշանակության գյուտերի հայտերի փորձաքննության համար պահանջվող ժամանակը անհիմն երկարաձգվում է: Նշված խորհրդատվությունը պետք է իրականացվի Մտավոր սեփականության գործակալության կողմից, քանի որ փորձագետների փորձառությունն ու մասնագիտական կարողությունները կարևոր դեր են խաղում:

Որակի ապահովման, ինչպես նաև տնտեսության մեջ ավելի արագ կիրառման հարցում իր ուրույն տեղն ունի օգտակար մոդելների պահպանությունը, որի համար սահմանված են ավելի թույլ պահանջներ՝ միայն նորության և արդյունաբերորեն կիրառելիության, որոնց ստուգումը համեմատաբար հեշտ և քիչ ծախսատար է, իսկ պահպանության ժամկետը՝ ավելի կարճ՝ 10 տարի:

Գյուտերի և օգտակար մոդելների որակի ապահովման առումով կարևոր է նաև դրանց մասին տեղեկատվությունը ընկերություններին և գյուտարարներին հասանելի դարձնելը :

*Տրամադրվող իրավունքների համապատասխան որակի ապահովման նպատակով անհրաժեշտ է՝*

- *իրականացնել արտոնագրերի համակողմանի ուսումնասիրություն՝ վերլուծելու ավելի թույլ հիմքերով ձեռք բերված իրավունքները և գործուն միջոցներ գտնելու դրանց տրամադրումից խուսափելու համար.*
- *ուսումնասիրել չօգտագործվող արտոնագրերի առաջացրած հնարավոր խնդիրները, գնահատել դրանց առաջացման պատճառները և ձեռնարկել համապատասխան միջոցներ:*

## 5.2. Ապրանքային նշաններ

Հայաստանի Հանրապետության տնտեսության համար անհրաժեշտ է ունենալ ապրանքային նշանների պահպանության ամուր և հուսալի համակարգ: Դա արդյունավետ միջոց է կանխելու ապրանքային նշանների անբարեխիղճ օգտագործումը, դրա նկատմամբ իրավունքների խախտումը, ոչ պատշաճ թույլտվությամբ օգտագործումը, ինչպես նաև տրամադրված իրավունքների չօգտագործման դեպքում՝ դրանց վերանայումը: Իրավական պահպանության տրամադրման (գրանցման) գործընթացը պահանջում է բարձր որակի խիստ չափորոշիչներ, ներառյալ փորձաքննությունը, որը կերաշխավորի գրանցման արդյունքում դրանց վավերական և սպառողների պահանջներին համապատասխան լինելը:

Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների որակը կարևոր է հատկապես բարեխիղճ մրցակցության համակարգի ձևավորման և անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխման համար:

*Տրամադրվող իրավունքների համապատասխան որակի ապահովման նպատակով անհրաժեշտ է՝*

*ապրանքային նշանների փորձաքննությունն իրականացնել միջազգային ստանդարտներին խիստ համապատասխանող և պրակտիկայում ընդունված փորձաքննության իրականացման մոտեցումներով.*

*ապրանքային նշանների օրենսդրության մեջ նախատեսել դրույթներ, որոնք հնարավորություն կտան փորձաքննության ժամանակ հաշվի առնել նաև ՀՀ-ում չգրանցված օտարերկրյա հայտնի ապրանքային նշանները, վարկանունները (բրենդները).*

*չօգտագործվող գրանցված ապրանքային նշանների նկատմամբ իրավունքի սահմանափակման նպատակով օրենսդրորեն հստակեցնել այդ ապրանքային նշանների գրանցումները վաղաժամկետ դադարեցնելու պայմանները և մեխանիզմները, հաշվի առնելով միջազգային պայմանագրերով և Եվրամիության դիրեկտիվներով սահմանված դրույթները.*

*ապահովել փորձագետների մասնագիտական կարողությունների հետևողական բարձրացումը:*

## 6. Գյուտարարության օժանդակություն ՓՄՁ-ներին

Արդյունաբերական սեփականության իրավունքների կիրարկումը կարող է մեծապես խթանել ՓՄՁ-ների զարգացմանը: Սովորաբար վերջիններս ավելի քիչ են հենվում արդյունաբերական սեփականության իրավունքների պահպանության վրա: Երբ դա հետևանք է անբավարար իրազեկության, խորհրդատվության կամ այլ անհրաժեշտ աջակցության, ապա անհրաժեշտ է անհապաղ կիրառել համապատասխան քաղաքականություն: Հետևապես պետությունը պետք է պայմաններ ստեղծի ՓՄՁ-ների համար օգտվելու շուկայի կողմից առաջարկվող հնարավորություններից, ինչպես նաև՝ գյուտերի և ապրանքային նշանների մասին համապատասխան տեղեկատվությունից:

Բացի դրանից, անհրաժեշտ է բարելավել մտավոր սեփականության իրավունքների հետ կապված ՓՄՁ-ների վեճերի լուծման համակարգը, ինչը կարող է ենթադրել վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների կիրառում, մասնավորապես առևտրային արբիտրաժների, որոնք կարող են լրացնել դատական համակարգը, եթե դրանք գործեն ավելի արագ ու հիմնավոր և գնային տեսակետից լինեն ավելի մատչելի: Դատարանների և առևտրային արբիտրաժի միջև հարաբերությունների հանգուցային ասպեկտների լուծման ճանապարհով բավականին կհեշտանա մտավոր սեփականության իրավունքների հետ կապված վեճերի լուծումը:

Մտավոր սեփականության վրա հիմնված ծրագրերի հիմնական նպատակը պետք է լինի ՓՄՁ-ների իրազեկության բարձրացումը և աջակցության ծառայությունների ապահովումը:

### ***Անհրաժեշտ է՝***

- ուսումնասիրել, թե ինչպես կարող են հետազայում խրախուսվել առևտրային արբիտրաժների գործունեությունը և հեշտացվել դրանց ընթացիկ աշխատանքը՝ արտոնագրային հարցերով դատական գործընթացների առումով:*
- բավարար օժանդակություն տրամադրել ՓՄՁ-ներին՝ արդյունաբերական սեփականության իրավունքների ձեռքբերման աշխատանքներն ուժեղացնելու և համապատասխան ու լայնածավալ աջակցության ծառայություններ մատուցելու համար:*
- բարելավել մտավոր սեփականության կառավարման վերաբերյալ բոլոր կազմակերպությունների և գիտահետազոտական ինստիտուտների, ներառյալ ՓՄՁ-ների տեղեկատվական ապահովումը:*

## 7. Մտավոր սեփականության իրավունքների կիրարկումը.

### պայքար հենության և կոնտրաֆակցիայի դեմ

Նորարարությունների պահպանությունը պետք է ուղեկցվի կիրարկման արդյունավետ մեխանիզմների կիրառմամբ: Ապրանքների կեղծումը և հենությունը ահռելի չափերի հասած բացասական երևույթ է, որը բացարձակ արժեքով և համաչափորեն աճում է միջազգային առևտրի աճին և տեխնիկական հնարավորությունների զարգացմանը զուգահեռ: Դա էական վնաս է հասցնում երկրի տնտեսական զարգացման աճին և նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ ռիսկի ենթարկելով քաղաքացիների առողջությունն ու անվտանգությունը:

Կոնտրաֆակտ և հենական արտադրանքի շրջանառության ծավալն աշխարհում տարեկան կազմում է շուրջ 200 միլիարդ ԱՄՆ դոլար: Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ ուսումնասիրություններ չեն կատարվել, սակայն կոնտրաֆակցիան և հենությունը, հատկապես հեղինակային իրավունքի բնագավառում, բացահայտ բնույթ է կրում: Փաստորեն շուկայում ազատ վաճառվում է ըստ էության գողացված արտադրանք: Այդպիսի գործունեությունը հիմնականում իրականացվում է հարկային դաշտից դուրս հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է հեղինակային իրավունքի ոլորտին, մասնավորապես՝ տեսալսողական ստեղծագործությունների, ձայներիզների և համակարգչային ծրագրերի հենական օրինակների շրջանառությանը: Այս երևույթը մեծ վնաս է հասցնում մշակույթին և տնտեսությանը՝ արգելք հանդիսանալով դրանց զարգացմանը: Ավելին, դրանց առկայությունը վնասում է երկրի միջազգային հեղինակությանը, նվազեցնում է օտարերկրյա ներդրումների պոտենցիալ հոսքի հավանականությունը՝ բարձրացնելով դրանց համար ռիսկի գործոնը:

Կոնտրաֆակտ և հենական ապրանքների շրջանառվող ծավալներում որոշակի մաս է կազմում օտարերկրյա պետություններից ներկրված ապրանքը, ինչն ակնհայտ է առևտրի ցանցում նույնիսկ առանց հատուկ ուսումնասիրություններ անցկացնելու:

Կոնտրաֆակտ և հենական ապրանքների մեծ ծավալների առկայությունը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- իրավատերերի անբավարար հետևողականությամբ մտավոր սեփականության իրենց իրավունքների պաշտպանության հարցերում.
- մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների դեմ պայքար իրականացնող պետական մարմինների թույլ համագործակցությամբ ու միացյալ գործողությունների ծրագրի բացակայությամբ.

- բնագավառում իրավախախտումների համար օրենսդրությամբ նախատեսված թույլ պատժամիջոցներով եւ դրանց կիրառման մեխանիզմների անկատարությամբ:

**Անհրաժեշտ է՝**

- մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների դեմ պայքարն ուժեղացնելու և դրա իրականացումը համակարգելու համար ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում կընդգրկվեն ՀՀ էկոնոմիկայի, մշակույթի, սփյուռքի նախարարությունների, ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, ինչպես նաև իրավատերերի շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ.
- կեղծ եւ հենական ապրանքների շրջանառության ծավալները եւ վնասների չափերը պարզելու նպատակով իրականացնել շուկայի պարբերական վերլուծություններ.
- մշակել եւ կյանքի կոչել կեղծարարության և հենության դեմ միացյալ գործողությունների ծրագիր.
- մտավոր սեփականության իրավունքների կիրարկման ապահովման համար գործող օրենքներում նախատեսել կիրարկման ժամանակակից, միջազգային պահանջներին բավարարող դրույթներ, որոնք պետք է համապատասխանեն Եվրամիության 2004/48/EC Կիրարկման դիրեկտիվին: Այդ դրույթների արդյունավետ կիրարկման նպատակով ապահովել պատշաճ փոխհամաձայնեցված գործողություններ՝ համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ու պատասխանատու մարմինների կողմից, բոլոր մակարդակներում, սկսած ոստիկանությունից, մաքսային մարմիններից ու պետական այլ կառույցներից մինչև դատարանները.
- ապահովել օրենսդրությամբ նախատեսված սահմանային միջոցառումների կիրարկումը և միջոցներ ձեռնարկել ապահովելու իրավատերերի և մաքսային ծառայությունների միջև տեղեկատվության փոխանակումը՝ բացահայտելու կեղծ և հենական ապրանքների փոխադրումը.
- ուսումնասիրել միջազգային փորձը մաքսային մարմիններին ԱՀԿ Մտավոր սեփականության առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրով նախատեսված *ex officio* գործողությունների իրականացման իրավունք

*վերապահելու հարցը՝ բացառելու կասկածելի փոխադրումները և կանխելու կեղծ ու հենական ապրանքների մուտքը շուկա.*

- միջոցներ ձեռնարկել մտավոր սեփականության օրենսդրության կիրարկումն ապահովող մարմինների՝ ռատիկանության ու մաքսային մարմինների համապատասխան աշխատողների և դատավորների՝ բնագավառին վերաբերող գիտելիքների բարձրացման ուղղությամբ.*
- ընդլայնել հասարակության իրազեկմանն ուղղված միջոցառումների ծավալը, որը կփոխի հասարակության վերաբերմունքը կեղծ և հենական ապրանքների նկատմամբ:*